Ընթացակարգ-քարտեզ

«Ժամանակավոր ներմուծում», «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով մեկ տարուց ավելի ժամկետով ՀՀ ներմուծված/արտահանված ապրանքների համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգման թույլտվության ստացման համար (ՀՀ կառավարության 04.08.2011թ. N1119-Ն որոշում)

1

Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ անձ) կարող է դիմել համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետը մեկ տարվանից ավելի ժամկետով երկարաձգելու թույլտվություն ստանալու համար, եթե ապրանքն արդեն իսկ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում գտնվում է ՀՀ մաքսային տարածքում (տարածքից դուրս)՝ ունենալով համապատասխան մաքսային ռեժիմի համար մինչև մեկ տարի ժամկետով թույլտվություն:

2

Թույլտվություն ստանալու համար դիմումը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվում տվյալ ապրանքի՝ համապատասխան մաքսային ռեժիմի թույլտվության ժամկետը լրանալուց ***առնվազն 2 ամիս առաջ:***

3

Դիմումին կից պետք է ներկայացվեն՝

1) տեղեկատվություն ապրանքի մասին.
2) մաքսային հայտարարագրի պատճենը,
3) պայմանագրի պատճենը (առկայության դեպքում), իսկ ԱՏԳԱԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ ֆինանսական վարձակալության պայմանագրի պատճենը.
4) հիմնավորում՝ մեկ տարվանից ավելի ժամկետով երկարաձգման անհրաժեշտության վերաբերյալ
5) ծրագրի նկարագիրը.
6) այլ տեղեկություններ (դիմողի հայեցողությամբ):

4

Դիմումը ՀՀ կառավարության աշխատակազմ մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն ու ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ կարծիքի, և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ եզրակացության:

Ընթացակարգ-քարտեզ

200 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգման թույլտվության ստացման վերաբերյալ

1

Եթե **ներդրումային ծրագրի շրջանակներում** ներմուծվող ապրանքների արժեքը գերազանցում է 200 միլիոն դրամը, ապա այդ ապրանքները ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով **թույլտվություն** ստանալ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգելու համար:

Բացառությամբ գործունեության յուրաքանչյուր փուլի համար հումք հանդիսացող ապրանքների:

2

200 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգման նպատակով **թույլտվությունը** ստանալու համար ապրանքներ ներմուծող անձը **դիմումը** գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացնում ապրանքները ՀՀ ներմուծելուց **առնվազն 1 ամիս առաջ:**

3

Դիմումին կից ներկայացվում են՝

1) ներդրումային ծրագիր՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. թիվ 1119-Ն որոշմամբ հաստատված թիվ 2, 4 և 5 ձևերի.
2) նախորդ տարվա համար անկախ աուդիտի եզրակացություն (եթե անձի գրանցումը պետական ռեգիստրի մարմիններում կատարվել է ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվանից մեկ տարվանից պակաս ժամկետում և նշված ժամանակահատվածում անձը չի ծավալել գործունեություն, ապա աուդիտի եզրակացությունը ներկայացնելը պարտադիր չէ).
3) ներմուծվող ապրանքների ցանկ՝ համաձայն թիվ 3 ձևի,

4

ՀՀ կառավարության լիազոր մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 200 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգման նպատակով տրվում է եզրակացություն՝ ապրանքներ ներմուխող անձի ներկայացրած ներդումային ծրագրի հիման վրա:

Ծրագրի գնահատման արդյունքներն ամփոփվում են՝ հաշվի առնելով չափորոշիչների միջին թվաբանական արդյունքը: Ամփոփման արդյունքում 26 և ավելի միավոր ստացած ծրագրերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, իսկ դրանից պակասի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

Հղում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1119-Ն որոշման թիվ 2 հավելված:

5

ՀՀ կառավարության աշխատակազմ հայտարարատուի կողմից ներկայացված դիմումի (կից փաստաթղթեր) հիման վրա ՀՀ կառավարության լիազոր մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և շրջանառության մեջ է դնում 200մլն դրամը գերազանցող ապրանքների ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը մինչև 3 տարի ժամկետով հետաձգման վերաբերյալ **ՀՀ կառավարության որոշման նախագիծ /այսուհետ՝ Նախագիծ/**

6

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ստանալու պահից **5-օրյա ժամկետում** Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը դրա մասին տեղեկացնում է անձին:

7

Համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից **մեկամսյա ժամկետում** Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը ներմուծող անձի հետ կնքում է **պայմանագիր:**

Հղում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1119-Ն որոշման թիվ 2 հավելված:

5

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն գնահատում են ծրագիրը՝ համաձայն հետևյալ չափորոշիչների՝

1) իրատեսականություն և հեռանկարայնություն (9).
2) ռիսկայնության աստիճան (6).
3) տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն (5).
4) զբաղվածության ընդլայնում (8).
5) նորարարություն և մրցակցային առավելություն (5).
6) արտահանման ուղղվածություն կամ ներմուծման փոխարինում (9).
7) արտադրողականություն (5).
8) կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքների կիրառում (կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի առկայություն) (2):

6

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 7-օրյա ժամկետում պատրաստում է եզրակացություն՝ ամփոփելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գնահատման արդյունքները: Ամփոփման արդյունքում 26 և ավելի միավոր ստացած ծրագրերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, իսկ դրանից պակասի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

7

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը դրական կամ բացասական եզրակացության հիման վրա մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ և այն ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

8

ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ստանալու պահից 5-օրյա ժամկետում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դրա մասին տեղեկացնում է դիմողին:: Ներդրումային ծրագրերի շրջանակներում համապատասխան մաքսային ռեժիմով ժամկետի երկարաձգման թույլտվություն ստացած անձը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն՝ յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետի ավարտը: